ՄԱՔՍԱՅԻՆ ՁԵՎԱԿԵՐՊՈՒՄՆԵՐԻ ՄԱՍՆԱԳԵՏԻ ՈՐԱԿԱՎՈՐՈՒՄԸ ՊԱՀՊԱՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՏԱՐԵԿԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՔԱՆԱԿԸ ԵՎ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԿԱՐԳԸ

ՀՀ ՊԵԿ
ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ
ԿԵՆՏՐՈՆ

1. Մաքսային ձևակերպումների մասնագետի որակավորումը պահպանելու համար անհրաժեշտ **տարեկան** միավորների քանակը սահմանված է **100 (հարյուր)** միավորը:

2. Մաքսային ձևակերպումների մասնագետի որակավորումը պահպանելու համար անհրաժեշտ տարեկան միավորները հատկացվում են ստորև նշված դեպքերում և քանակով.

   1) Մաքսային ձևակերպումների տվյալ մասնագետի կողմից տվյալ տարվա ընթացքում էլեկտրոնային եղանակով ներկայացված յուրաքանչյուր մաքսային հայտարարագրի համար, որի հիման վրա տեղի է ունեցել ապրանքների բացթողում, տվյալ մասնագետին հատկացվում է **0.5 միավոր**, ընդ որում միավորներ հատկացվում են, եթե ներկայացրած բոլոր մաքսային հայտարարագրերի քանակի մեջ այն հայտարարագրերը, որոնց կապակցությամբ տվյալ մասնագետի նկատմամբ մաքսային իրավախախտում (մաքսային կանոնների խախտում) թույլ տալու համար նշանակվել է օրենքով նախատեսված պատասխանատվության միջոց, կազմում են 10%-ից (տասը տոկոսից) ոչ ավելի):

   2) մաքսային ձևակերպումների մասնագետի վերապատրաստման դասընթացներին տվյալ տարում (դասընթացի բոլոր դասաժամերի առնվազն 95 տոկոսին) մասնակցելու համար տվյալ մասնագետին հատկացվում է 20 միավոր,

   3) տվյալ տարում մաքսային ձևակերպումների մասնագետի վերապատրաստման դասընթացների ամփոփիչ քննության ընթացքում (եթե տվյալ քննության ընթացքում մաքսային ձևակերպումների տվյալ մասնագետը ճիշտ է պատասխանել քննական բոլոր հարցերի առնվազն 60 տոկոսին) տրված յուրաքանչյուր ճիշտ պատասխանի համար տվյալ մասնագետին հատկացվում է **2.3 միավոր**:

3. Յուրաքանչյուր տարվա համար մաքսային ձևակերպումների մասնագետի որակավորումը պահպանելու համար անհրաժեշտ տարեկան միավորների հաշվառման արդյունքներն ամփոփվում են մինչև տվյալ տարվան հաջորդող տարվա հունվարի 31-ը՝ սկսած 2024 թվականից:

Մաքսային ձևակերպումների մասնագետը որակավորումը պահպանելու համար կարող է անհրաժեշտ միավորներ հավաքել ըստ ստորև ներկայացված օրինակների:

Օրինակ 1

էլեկտրոնային եղանակով ներկայացնել 200 և ավել մաքսային հայտարարագիր (ընդ որում մաքսային իրավախախտումների քանակը չպետք է գերազանցի հայտարարագրերի քանակի 10%-ը (տասը տոկոսը)) և չմասնակցել վերապատրաստման դասընթացներին և ամփոփիչ քննությանը (200*0,5միավ.=100 միավ.):

Օրինակ 2

Մասնակցել վերապատրաստման դասընթացներին (բոլոր դասաժամերի առնվազն 95%-ին) և ամփոփիչ քննությանը ապահովել առնվազն 87,5% (ճիշտ պատասխանել 40 հարցից առնվազն 35 հարցին) և էլեկտրոնային եղանակով մաքսային հայտարարագիր չներկայցնել (20միավ.+35*2,3միավ.=100,5միավ.):

Օրինակ 3

Ներկայացնել 50 և ավել մաքսային հայտարարագիր, մասնակցել վերապատրաստման դասընթացներին (բոլոր դասաժամերի առնվազն 95%-ին) և ճիշտ է պատասխանել քննական բոլոր հարցերի առնվազն 60 տոկոսին: (50*0,5միավ+20միավ+24*2,3միավ=100.2միավ):

Օրինակ 4

էլեկտրոնային եղանակով ներկայացնել առնվազն 160 հատ մաքսային հայտարարագիր (ընդ որում մաքսային իրավախախտումների քանակը չպետք է գերազանցի հայտարարագրերի քանակի 10%-ը (տասը տոկոսը)), մասնակցել վերապատրաստման դասընթացներին (բոլոր դասաժամերի առնվազն 95%-ին) և չմասնակցել ամփոփիչ քննությանը:

Անվանում	Օրինակ 1	Օրինակ 2	Օրինակ 3	Օրինակ 4
էլեկտրոնային եղանակով ներկայացված հայտարարագեր	Առնվազն 200 հատ (100 միավոր)	-	Առնվազն 50 հատ (25 միավոր)	Առնվազն 160 հատ (80 միավոր)
վերապատրաստման դասընթացներին մասնակցություն	-	95% (20միավոր)	95% (20միավոր)	95% (20միավոր)
ամփոփիչ քննության գնահատական	-	87,5% (80,5 միավոր)	60% (55,2 միավոր)	-
Ընդամենը	**100 միավոր**	**100,5 միավոր**	**100,2 միավոր**	**100 միավոր**